# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1996 թ. ապրիլի 13-ին, ժամը 12-ին կայանալու է «Արզնի» հանքային ջրերի գործարան բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի հերթական ժողովը հետեւյալ օրակարգով.

1. «Արզնի» հանքային ջրերի գործարան բաց բաժնետիրական ընկերության 1995 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին:
2. Ընկերության 1995 թ. տարեկան ամփոփ հաշվեկշիռը հաստատելու մասին:
3. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը:
4. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին:

Ժողովը տեղի է ունենալու Բյուրեղավանում, ընկերության դահլիճում:

**«ԱՐԶՆԻ» հանքային ջրերի գործարան բաց բաժնետիրական ընկերության խորհուրդ**

# ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սենյականոց բնակարան 150 քմ ընդհանուր տարածքով, բնակելի մակերեսը 65 քմ: Ունի ձեղնահարկ, մակերեսը 50 քմ: Բնակարանը գտնվում է Աջափնյակում, Հանրապետական հիվանդանոցի մոտակայքում:

**Հասցեն՝ Մարգարյան 23, 1 մուտք, 4-րդ հարկ, բնակարան 15:**
**Հեռ. 581841 (ժամը 15–20-ը) կամ 342586:**

# ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

TOSHIBA 2100CT 486-DX2 անհատական գունավոր համակարգիչ եւ HP-320 գունավոր ատեղային տպիչ:

**Հեռախոս 63-53-30:**

# ԼՈՒՍԱՐՎՈՒՄ Է

**«ՍՈՆԱ» ՍՊԸ Շենգավիթի շրջանում:**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴՊՐՈՑ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴՊՐՈՑԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 1996–1997 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ**

Դասընթացների նպատակն է դիմորդներին նախապատրաստել դպրոցի ընդունելության մրցույթներին:

Ուսման տեւողությունը ստացիոնար բաժնում 3 ամիս է, իսկ հեռակայում՝ 4 ամիս:

Ուսուցումը վճարովի է: Վճարումը կատարվում է ամբողջ դասընթացի համար ըստ առանձին առարկաների՝

- Պետա-իրավական գիտություններ:
- Տնտեսագիտություն եւ մենեջմենթի հիմունքներ:
- Օտար լեզուներ (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն):

Դասընթացներին կարող են մասնակցել մինչեւ 30 տարեկան բարձրագույն կրթություն ունեցողները, պետական ծառայողները, ինչպես նաեւ մինչեւ 45 տարեկան պետական ծառայողները:

Դիմումներն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից:

Պարապմունքներն սկսվում են ապրիլի 1-ից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ կառավարման դպրոց:

**Հասցեն՝ Կիեւյան 8**
**(նախկին թիվ 10 ուսումնարանի շենքում)**
**Հեռախոս 22-89-42, 27-75-15**

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

## AMERICAN UNIVERSITY OF ARMENIA
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՉՈՒՄՆԵՐ

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է 1996-1997 ուսումնական տարվա դիմորդների փաստաթղթերի ընդունումը: Ընդունելությունը կազմակերպվում է արդյունաբերական ճարտարագիտության, շինարարական ճարտարագիտության, գործարար ղեկավարման եւ քաղաքագիտության մասնագիտացումների գծով:

Դիմորդները պետք է ունենան համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն, տնտեսագիտության, ճարտարագիտության MBA ասպիրանտի համար, ֆիզիկամաթեմատիկական կամ մեխանիկա, շինարարական ճարտարագիտության M.Eng. աստիճանի համար, ճարտարագիտության, մաթեմատիկա, մեխանիկա՝ արդյունաբերական ճարտարագիտության M. Eng. աստիճանի համար, պատմության, իրավագիտության, լեզուների կամ հասարակական գիտությունների այլ բնագավառներ՝ քաղաքագիտության MA աստիճանի համար:

Անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր է:

Դիմորդները պետք է ներկայացնեն

1. Դիպլոմի եւ ներդիրի բնագիր օրինակներ՝ իրենց պատճեններով:
2. Երեք լուսանկար նմուշ:
3. Տնային լրացման դիմում եւ ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Փաստաթղթերի ընդունման համար կանխավճարը գումարով կազմում է ԱՄՆ 10 դոլարին համարժեք գումար, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետը 1996 թ. ապրիլի 26-ն է:

Բոլոր դիմորդները 1996 թ. մայիսի 3-ին կհանձնեն անգլերեն լեզվի իմացության ստուգման քննություն (բացառությամբ այն դիմորդների, ովքեր վերջերս ստացել են TOEFL քննության 550 եւ ավել միավորներ): Առաջին փուլով անցած այն դիմորդները, ովքեր չեն բավարարի անգլերեն լեզվի իմացության պահանջվող մակարդակը, կհաճախեն 1996 թ. մայիսին ՀԱՀ-ում սկսվող անգլերեն լեզվի ուսուցման դասընթացին: Անգլերեն լեզվի ուսուցման դասընթացի ուսման վարձը կազմում է ԱՄՆ 180 դոլարին համարժեք գումար:

Հիմնական ծրագրում վերջնական ընդունելությունը կկատարվի դիպլոմի ներդիրի միջին գնահատականի, նախապատրաստական փուլում դիմորդների ցուցաբերած առաջադիմության եւ այլ ծրագրի համար անհրաժեշտ բնագավառի քննական արդյունքների հիման վրա (GMAT կամ GRE): Ուսման տեւողությունը հիմնական ծրագրի համար երկու տարի է: Հիմնական ծրագիր ընդունված բոլոր ուսանողները պետք է կրթության եւ գիտության նախարարության հետ ստորագրեն պայմանագիր հետո երեք տարի Հայաստանում մնալու եւ աշխատելու մասին պարտավորագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի Ընդունելության գրասենյակ, Հասցեն՝ Մարշալ Բաղրամյան 40, առաջին հարկ, 19 սենյակ, հեռախոս 27-10-85:

ՀԱՀ-ը ռասայական, կրոնական, սեռային կամ ազգային խտրականություն չի հանդուրժում


# ԱՅԱՔՍ

Ֆիրման ապրիլի 1-ից կազմակերպում է տուրիստական ուղեւորություն

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Հանելի շրջագայություն, տաքավետ առեւտուր

ԿԱՀԻՐԵ - 3 գիշեր,
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ - 4 գիշեր — 650 ԱՄՆ դոլարի համարժեքով

ՊՈՐՏ ՍԱԻԴ - 3 գիշեր,
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ - 4 գիշեր — 665 ԱՄՆ դոլարի համարժեքով

Ապրիլի երկրորդ կեսից կազմակերպում է կանոնավոր չվերթ ԿԱՀԻՐԵ

ՊԱՏՎԻՐԵԼ ՀԵՌ. 531673, 524564



ՉԳՈՒՇԱՑԵՔ
# դիֆթերիայի վարակ կա



Այդ վարակից միակ և ապահով պաշտպանության միջոցը
ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆ Է

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանի՝ հանրապետության ողջ բնակչությանը (բոլոր տարիքային խմբերին) առաջարկվում է պատվաստվել դիֆթերիայի դեմ:

*Դիմեք Ձեր տեղամասային պոլիկլինիկաները,*

որոնք USAID կազմակերպության աջակցությամբ, ապահովված են պատվաստանյութով և միանվագ ներարկիչներով:

Ինչո՞ւ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ ՎԱՂԸ, ԵԹԵ ԿԱՐԵԼԻ Է ԱՅՍՕՐ:


Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ծառայությունների *առաջարկի* եւ *պահանջարկի* մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռ»:

«Հայաստանի Հանրապետություն» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Տպաքանակ 3000. Ստորագրված է տպագրության 21. 03. 1996 Գինը՝ 75 դրամ

digitised by A.R.A.R.@